Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 48 - Ա
որոշման

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԶՈՐԱՑՈՒՄ»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	UOU Մանկական Գյուղեր Միջազգային կազմակերպության, ինչպես նաև իր անդամ ընկերակցություն հանդիսացող «UOU-Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի համար ռազմավարական նշանակություն ունի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, այդ թվում տեղահանված բնակչության աջակցությունը: Իրականացվող ծրագրի նպատակն է տնտեսապես հզորացնել Լեռնային Ղարաբաղից տեղահանված և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում բնակություն հաստատած շուրջ 100 մասնակից:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների մասին օրենքներով նախատեսվող արտոնություններից:
3.	Բարեգործը և ֆինանսավորման աղբյուրը	Ռենովաբիս կազմակերպություն /Գերմանիա, Ֆրայզինգ Դ-85354, Դոմբերգ 38/40/, UOU Մանկական Գյուղեր Ավստրիա /Ավստրիա, Ինսբրուկ, 6020, Շտաֆլերշտրասե 10Ա/
4.	Ծրագրի կատարողը	«UOU-Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամը (ՀՎՀՀ՝ 03517269, հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Հրաչյա Քոչարի 8, բնակարան 18-19)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզ, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	38,759,354 դրամ

7.	Բարեգործություն ստացողը	Լեռնային Ղարաբաղից տեղահանված և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում բնակվող շուրջ 100 մասնակից
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2025 թվականի հունվարի 24-ից մինչև 2025 թվականի հոկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) նախատեսվում է մասնակիցների տնտեսական կայունացումն ապահովող պարագաների՝ աշխատանքային գործիքների, սարքավորումների, էլեկտրական տեխնիկայի տրամադրում: Իրականացվելու է 2025 թվականի հունվարի 24-ից մինչև 2025 թվականի հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 4,031,040 դրամի չափով: 2) ծրագրի շրջանակներում կանցկացվեն դասընթացներ, դասընթացներ անցած մասնակիցները կներկայացնեն իրենց բիզնես պլանները, որի արդյունքում լավագույնները կստանան դրամաշնորհներ: Նախատեսվում է իրականացնել 2025 թվականի հունվարի 24-ից մինչև 2025 թվականի հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 3,100,800 դրամի չափով: 3) նախատեսվում է կազմակերպել մասնագիտական դասընթացներ՝ վարսահարդարման, մատնահարդարման, դիմահարդարման, անգլերենի և այլն: Իրականացվելու է 2025 թվականի հունվարի 24-ից մինչև 2025 թվականի հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 10,387,680 դրամի չափով: 4) դասընթացներ անցկացնելու նպատակով նախատեսվում է իրականացնել ուղեցույցների տպագրություն՝ 2025 թվականի հունվարի 24-ից մինչև 2025 թվականի հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 641,866 դրամի չափով: 5) ծրագրի մասնագիտական անձնակազմի՝ Կյանքի հմտությունների և զբաղունակության 4 մասնագետի և ծրագրի համակարգողի (մասնակիցների հետ անմիջականորեն աշխատող անձնակազմի) վարձատրություն և ապահովագրություն: Նախատեսվում է իրականացնել 2025 թվականի հունվարի 24-ից մինչև 2025 թվականի հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 16,688,500 դրամի չափով: 6) ծրագրի իրականացման նպատակով տրանսպորտային ծախսեր՝ 2025 թվականի հունվարի 24-ից մինչև 2025 թվականի հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 869,774 դրամի չափով:

		7) կազմակերպական ծախսեր՝ գրասենյակային պարագաների, տնտեսական նյութերի, կապի և հեռահաղորդակցության ծախսեր, աշխատակազմի ծախսեր (ծրագրի ֆինանսական և ադմինիստրատիվ մասնագետի վարձատրություն և ապահովագրություն), Գենդերային հավասարության վերաբերյալ դասընթաց և մեթոդաբանություն աշխատակազմի համար: Նախատեսվում է իրականացնել 2025 թվականի հունվարի 24-ից մինչև 2025 թվականի հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 3,039,694 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) մասնակիցների համար աշխատանքային գործիքների, սարքավորումների, էլեկտրական տեխնիկայի և այլ պարագաների ձեռքբերում՝ 4,031,040 դրամի չափով. 2) մասնագիտական դասընթացների կազմակերպման նպատակով ծառայությունների ձեռքբերում (վարսահարդարման, մատնահարդարման, դիմահարդարման, անգլերենի և այլն)՝ 10,387,680 դրամի չափով. 3) տպագրական ծառայությունների ձեռքբերում՝ 641,866 դրամի չափով. 4) տրանսպորտային ծառայությունների ձեռքբերում՝ 869,774 դրամի չափով. 5) գրասենյակային պարագաների, տնտեսական նյութերի, Կապի և հեռահաղորդակցության ծառայությունների ձեռքբերում՝ 465,120 դրամի չափով. 6) աշխատակազմի համար վերապատրաստման դասընթացների կազմակերպման ընթացքում հյուրասիրությունների հետ կապված ապրանքների ձեռքբերում՝ 771,324 դրամի չափով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	1) գրասենյակային պարագաների, տնտեսական նյութերի, Կապի և հեռահաղորդակցության ծառայությունների ձեռքբերում՝ 465,120 դրամի չափով. 2) աշխատակազմի ծախսեր (ծրագրի ֆինանսական և ադմինիստրատիվ մասնագետի վարձատրություն և ապահովագրություն)՝ 1,803,250 դրամի չափով Աշխատակազմի համար վերապատրաստման դասընթացների կազմակերպման ընթացքում հյուրասիրությունների հետ կապված ապրանքների ձեռքբերում՝ 771,324 դրամի չափով:

12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի, տեղական ինքնակառավարման մարմինների, Միասնական սոցիալական ծառայության համապատասխան տարածքային կենտրոնների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի համար 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

04.02.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ